ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 374 - Ա 29 հունիսի 2016 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի N 40 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգի» 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման (մարզային հողային պետական տեսչության) բաժնի առաջատար մասնագետի (64-3.3-1) թափուր պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային հանձնաժողովի կազմը՝ Արմեն Ավետիսյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ), Միքայել Եղիազարյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Էդվարդ Ստեփանյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման (մարզային հողային պետական տեսչության) բաժնի վարիչ), Արմեն Զոհրաբյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Գայանե Խանամիրյան (Գավառի N 4 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն), Ռուզաննա Քոլոզյան (Գավառի N5 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն)՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Ա.Ավետիսյանին, քարտուղար՝ Մ.Եղիազարյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այսորոշման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ